ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՇՁԲ-19/02

26 ապրիլի 2019թ.

ք. Ստեփանավան

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Միքայել Ղարաքեշիշյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ >> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Էդվարդ Քոչարյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. Պատվիրատուն պատվիրում է կատարել՝ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի ներհամայնքային փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքները:
2.Աշխատանքի կատարման սկիզբը՝ 26.04.2019թ. ավարտը 30.04.2019թ. :
3. Կողմերի համաձայնությամբ աշխատանքի արժեքը սահմանվում է՝
700000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ , ներառյալ բոլոր հարկերը :
4. Կատարողը պարտավորվում է աշխատանքների կատարման ժամանակ ղեկավարվել ՃՀԱ կամ տեխնիկական առաջադրանքով և օրացույցային գրաֆիկով , ապահովելով Պայմանագրի կատարման որակը:
5. Աշխատանքի ավարտը ֆիքսվում է հանձնման – ընդունման ակտով , որի ժամանակ Կատարողը հանձնում է Պատվիրատուին կազմած նախագծանախահաշվային փաստաթղթերը , իսկ Պատվիրատուն պարտավորվում է 20 - օրյա ժամկետում կատարել Պայմանագրով նախատեսված գումարի վճարումը : Պատվիրատուի կողմից վճարման ուշացման դեպքում սահմանվում է տուգանք յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գումարի 0,05% - ի չափով : Կատարողի կողմից Պայմանագրի ժամկետը խախտելու դեպքում ՝ ուշացված աշխատանքային օրվա համար սահմանվում է տուգանք Պայմանագրի մնացորդային արժեքի 0,05% - ի չափով :
6. ՃՀԱ կամ տեխնիկական առաջադրանքից դուրս , լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտության դեպքում , կողմերի համաձայնությամբ կազմվում է լրացուցիչ համաձայնագիր :
7.Կատարված աշխատանքում հայտնաբերված թերությունները վերացվում են Կատարողի կողմից , առանց լրացուցիչ վճարի:
8. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում կողմերը կազմում են համատեղ ակտ փաստացի կատարված աշխատանքների մասին , որով որոշում է կատարված աշխատանքի արժեքը , ինչի հիման վրա Պատվիրատուն կատարում է վճարումը:
9. Կողմերի միջև առաջացած վիճահարույց հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենքով:

<< ՊԱՏՎԻՐԱՏՈՒ >>

Ստեփանավանի համայնքապետարան
ՀՎՀՀ 06954104

հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ք.Ստեփանավան Սոս Սարգսյան 1
հ/հ 900252000311
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

համայնքի ղեկավար _____ Մ.Ղարաքեշիշյան
(ստորագրություն)
Կ.Տ.

<< ԿԱՏԱՐՈՂ >>

<< ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ

ՀՎՀՀ 06933586
հասցե՝ ք. Վանաձոր , Վարդանանց 17-5
հ/հ 16036026535100
ՎՏԲ – Հայաստան բանկ Վանաձոր մ/6

տնօրեն՝ _____ **Է.Քոչարյան**
(ստորագրություն)
Կ.Տ.